ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

"13" փետրվարի 2025 թվական N 305-Ա

ք. Երևան

«11009 ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման 13-րդ կետի «գ» ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) 2025 թվականի «11009 Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելված 1-ի,

2) Ծրագրի 2025 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածությունը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանին:

2/13/2025

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի
2025 թվականի փետրվարի 13-ի
թիվ 305-Ա հրամանի

2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
«11009 ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Բովանդակություն

Հիմնախնդիր 2
Ծրագրի նպատակ 2
Ծրագրի նկարագրություն 2
Բաղադրիչ 1. «Գաղափարից մինչև բիզնես» ծրագիր 3
Բաղադրիչ 2. Ինկուբացիոն ծրագիր 3
Բաղադրիչ 3. Տաղանդի ներգրավման ծրագիր 4
Բաղադրիչ 4. Միջազգային աքսելերացիոն ծրագիր 5
Կնքված դրամաշնորհային պայմանագրերով նախատեսված գումարների մնացորդի մարում 6
Ծրագրի սկզբունքները 7

Հիմնախնդիր

Ծրագրի մշակման հիմքում ընկած է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման հավելվածի «2.3 Բարձր տեխնոլոգիաներ» մասով սահմանված նպատակները, որոնց համաձայն ՀՀ կառավարությունը շարունակելու է նպաստել նորարարական համակարգի զարգացմանը և տարբեր ոլորտներում համակողմանի ներդրմանը: Նորարարական համակարգի զարգացման գործընթացում առանցքային և նշանակալի դեր ունի ձեռնարկատիրական էկոհամակարգի կայացումը, քանի որ տնտեսությունում նորարարության հիմնական շարժիչ ուժերից են ձեռներեցները, որոնց կողմից գիտական արդյունքները և նոր գաղափարները առևտրայնացվում են ու ստեղծում նոր արժեք տնտեսությունում:

Մի շարք ոլորտային ուսումնասիրություններ[1] փաստում են, որ հայաստանյան ձեռնարկատիրական համակարգի բացերից են ձեռնարկատիրական կրթությունը, ձեռներեցության ֆինանսավորումը, տեխնոլոգիական ինկուբատորների և աքսելերատորների կայացման ցածր մակարդակը, ինչպես նաև կարևորում են կառավարության կողմից ներդրվող ծրագրերի անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն ձեռներեցության խթանմանը: Նշված համակարգային խնդիրների լուծման նպատակով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից 2025 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել «Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառումը:

Ծրագրի նպատակ

Ծրագրով առաջարկվում է խթանել Հայաստանի ազգային նորարարական համակարգի զարգացումը, ստեղծել անհրաժեշտ ինովացիոն միջավայր նոր ընկերությունների ձևավորման ու առաջընթացի համար, այդպիսով՝ նպաստել նաև մարդկային կապիտալի զարգացմանը:

Ծրագիրը նպատակ ունի պետական միջամտությամբ լրացնելու հայաստանյան նորարարական համակարգում առկա բացերը՝ սկսելով թույլ զարգացած օղակներից: Մասնավորապես, նախատեսվում է սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին և թիմերին ապահովել ֆինանսավորման և աճի հնարավորություններով, ինչպես նաև ստեղծել նոր գիտելիքի ներհոսքի հնարավորություններ: Ծրագրի վերջնարդյունքում ակնկալվում է ունենալ տեխնոլոգիական սկսնակ ընկերություններ, որոնց որոշակի մասը պատրաստ կլինի ներդրողներից ներդրումներ ներգրավել:

Ծրագրի նկարագրություն

Ծրագիրը բաղկացած է **փոխկապակցված 4 ենթածրագրերից (բաղադրիչներից)**:

---

[1] ԵՏՀ ՄԱԿ (2020). Նորարարության քաղաքականության պատկերը Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրների համար
Ամերիա ՓԲԸ (2020). Ձեռնարկատիրության Համաշխարհային Զեկույց Հայաստան 2019/2020

Բաղադրիչ 1. «Գաղափարից մինչև բիզնես» ծրագիր

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը «Գաղափարից մինչև բիզնես» բաղադրիչի միջոցով ֆինանսավորում կտրամադրի սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին և գիտահետազոտական թիմերին առևտրայնացնելու իրենց գաղափարները և նոր արժեք ստեղծելու տնտեսությունում: Դրամաշնորհների տեսքով ֆինանսավորման տրամադրումը ընկերություններին հնարավորություն կտա սաղմնային և աճի փուլերում ապահովելու արտադրանքի զարգացումը, կայանալու և ապագայում ավելի գրավիչ ու վստահելի դառնալ ներդրումների, բանկային վարկավորման կամ պատվիրատուների համար:

Ծրագիրը նպատակ ունի նաև հանրայնացնել ձեռներեցության գաղափարը, բարձրացնել դրա նկատմամբ հետաքրքրվածությունը, ինչպես նաև խթանել ձեռներեցության միջոցով և բարձր տեխնոլոգիական լուծումների կիրառմամբ երկրում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը:

2024 թվականի «Գաղափարից մինչև բիզնես» բաղադրիչի ներքո նախատեսվում է անցկացնել դրամաշնորհների տրամադրման մրցույթ «Գաղափարի փուլ» բաղադրիչով: «Գաղափարի փուլ» բաղադրիչով նախատեսվում է տրամադրել առավելագույնը 5 միլիոն ՀՀ դրամ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցները (ծրագրի հաջորդ բաղադրիչի շրջանակում) հնարավորություն կունենան մասնակցելու ինկուբացիոն ծրագրի, ինչը կօգնի նրանց աշխատելու իրենց գաղափարի վրա, մշակելու նվազագույն կենսունակ արտադրանքը և անցում կատարելու ընկերության զարգացման հաջորդ փուլ: Ինկուբացիոն փուլի բարեհաջող ավարտից հետո այդ ընկերությունները պատրաստ կլինեն դրամաշնորհի տեսքով ֆինանսավորում ստանալ թիրախային շուկաներ մուտք գործելու և հաճախորդների բազա հավաքագրելու համար:

Բաղադրիչ 2. Ինկուբացիոն ծրագիր

Շարունակելով ստարտափի զարգացման շղթայի տրամաբանությունը՝ ծրագրի երկրորդ բաղադրիչով նախատեսվում է սկսնակ ընկերությունների և թիմերի աճի համար համապատասխան ենթակառուցվածքների ապահովում: Բաղադրիչի հիմնական նպատակն է լրացնել ձեռնարկատիրական համակարգում առկա բացերը՝ կապված սկսնակ ընկերության զարգացման համար անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների հետ, որոնք ֆինանսական ռեսուրսների հասանելիության հետ միասին կարող են առաջընթաց ապահովել տեխնոլոգիական համակարգում:

Այս բաղադրիչով առաջարկվում է ոլորտի առաջատար կազմակերպությունների (կրթական հաստատություններ, ինկուբատորներ, աքսելերատորներ և այլն) հետ համագործակցության միջոցով գիտական և տեխնոլոգիական հիմքով ստարտափերի համար մշակել և ապահովել իրենց կարիքներին համապատասխան ինկուբացիոն և աքսելերացիոն բնույթի ծրագրեր: Նման ծրագրերը կաջակցեն սկսնակ ընկերություններին և թիմերին՝ խթանելով իրենց աճի տեմպը,

թիմի անդամներին ապահովելով անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով նախատիպերի մշակման, բիզնես մոդելավորման, ֆինանսական պլանավորման, աճի ռազմավարությունների մշակման, ներդրողների առջև գործարար ծրագրի ներկայացման և այլ ուղղություններով:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար կանցկացվեն դրամաշնորհային մրցույթներ, որոնց շրջանակում դրամական հատկացում կտրամադրվի այն կազմակերպություններին, որոնք կմշակեն և կանցկացնեն շահառու ընկերությունների և թիմերի հետագա աճին նպաստող ինկուբացիայի, բիզնես խորհրդատվության և աջակցության ծրագրեր:

Բաղադրիչ 3. Տաղանդի ներգրավման ծրագիր

Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, տեղական փոքր շուկան և այլ պայմանները՝ տեխնոլոգիական համակարգի զարգացման տեսանկյունից կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Հայաստանի և աշխարհի միջև կապերի ստեղծմանը և դեպի Հայաստան գիտելիքի ներհոսքի ապահովմանը: Այս նպատակին առաջարկվում է հասնել տաղանդի շարժունակության ծրագրերի միջոցով: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել սփյուռքահայ ձեռներեցներին թիրախավորող «Ներուժ» ծրագիրը:

«Ներուժ 6.0» ծրագիր

«Ներուժ 6.0» ծրագրի նպատակն է խթանել հայաստանյան ձեռնարկատիրական էկոհամակարգը՝ միաժամանակ նպաստելով հայրենադարձությանը և դեպի Հայաստան տաղանդի ներհոսքին: Ծրագրով նախատեսվում է աշխարհի տարբեր երկրներից հայազգի ձեռներեցներին և առաջատար մասնագետներից բաղկացած թիմերին ներգրավել՝ վերջիններիս տրամադրելով ֆինանսական և այլ բնույթի աջակցություն տեխնոլոգիական սկսնակ ընկերություններ Հայաստանում հիմնելու և զարգացնելու համար: Ծրագրի արդյունքում ակնկալվում է, մի կողմից, շահառուների համար ապահովել ձեռներեցությամբ զբաղվելու պայմաններ, զարգացնել ձեռնարկատիրական էկոհամակարգը և մյուս կողմից, նպաստել Հայաստանում սփյուռքից բարձր որակավորմամբ մասնագետների և կառավարչական տաղանդի ներգրավմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տրամադրել նվիրաբերության տեսքով պետական աջակցություն երկու ուղղություններով՝ «Գաղափարի փուլ» և «Աճի փուլ» անվանակարգերում՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1867-Լ որոշումը: Դրամական հատկացման բյուջեի առավելագույն չափը կազմում է 90,000,000 (իննսուն միլիոն) ՀՀ դրամ:

«Գաղափարի փուլ»

Այս փուլի շրջանակում նախատեսվում է տրամադրել մինչև 3 թիմերի, համապատասխանաբար՝ 5,000,000 (հինգ միլիոն), 10,000,000 (տասը միլիոն) և 15,000,000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ:

«Աճի փուլ»

Այս փուլի շրջանակում նախատեսվում է տրամադրել մինչև 3 թիմերի, համապատասխանաբար՝ 10,000,000 (տասը միլիոն), 20,000,000 (քսան միլիոն) և 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ:

«Աքսելերացիա»

Նախատեսվում է միջազգային աքսելերացիոն կազմակերպության ներգրավմամբ ծրագրի մասնակիցներին հնարավորություն կընձեռնվի խորապես զարգացնել իրենց գիտելիքները, ծանոթանալ միջազգային շուկա մուտք գործելու և իրենց դերը ամրապնդելու գաղտնիքներին, ծանոթանալ միջազգային թրենդներին, շուկային պահանջարկին, ինչպես նաև ծրագրից հետո պահել շարունակական կապը աքսելերացիոն կազմակերպության հետ՝ ընդգրկվելով իրենց պլատֆորմում:

Նախատեսվում է արտասահմանյան հայտնի աքսելերատորներից մեկին դրամաշնորհի տեսքով տրամադրել մինչև 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ ֆինանսավորում:

Աքսելերացիոն ծրագիրն իրականացնող ընկերությունից ակնկալվում է ապահովել մինչև 15 հոգուց բաղկացած թիմ՝ հետևյալ կազմով.

- մենթորական կազմ՝ յուրաքանչյուր մասնակցի հետ անհատական աշխատանքներ իրականացնելու համար,
- դասախոսական կազմ՝ տեխնոլոգիական նորարարություններին և ստարտափ էկոհամակարգին ավելի ճշգրիտ ուղղորդելու համար,
- մրցավարական կազմ, որը կգնահատի մասնակիցների կողմից ներկայացված պրոդուկտները, ինչպես նաև հանդես կգան սեփական ներդրումային առաջարկներով:

«Ներուժ 6.0» ծրագրի լոգիստիկ բաղադրիչի իրականացման և ավիատոմսերի ձեռքբերման համար նախատեսվում է տրամադրել ընդամենը 45,000,000(քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ:

Բաղադրիչ 4. Միջազգային աքսելերացիոն ծրագիր (ներառյալ՝ հարկեր)

Նպատակ ունենալով 26 շաբաթ տևողությամբ աքսելերացիոն ծրագիր իրականացնելու՝ նախատեսվում է ըստ Forbes-ի վարկանիշային աղյուսակի աշխարհի թոփ 10 լավագույն աքսելերացիոն ծրագրեր իրականացնող ընկերություններից մեկին, ինչպիսիք են Techstars-ը, Plug and Play-ը, 500 Global-ը, Y Combinator-ը, MassChallenge-ը, SOSV-ն, Startupbootcamp-ը, Internet Initiatives Development Fund (IIDF)-ը , Wayra-ն և AngelPad-ը հրավիրել Հայաստան:

Վերոնշյալ համաշխարհային աքսելերատորները ապահովում են ձեռնարկատերերին և ստարտափներին աջակցող էկոհամակարգերով և ֆինանսավորմամբ: Այս ծրագրերը

ապահովում են նաև մենթորություն և կապիտալ՝ սեփական կապիտալի դիմաց: Դրա նպատակն է օգնել նորաստեղծ ձեռնարկություններին աճելու երեքից չորս ամսվա ընթացքում:

Բացի ներդրումներից, աքսելերատորներն իրենց ստարտափներին սովորաբար առաջարկում են բիզնեսի և կառավարման խորհրդատվություն, արտադրանքի վերաբերյալ հետադարձ կապ և ներդրողներին հասանելիություն՝ հնարավորություն ընձեռելով իրենց պրոդուկտը ներկայացնելու հրեշտակ ներդրողներին և վենչուրային ֆոնդերի ներկայացուցիչներին:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 336 մլն ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկեր):

5. Կնքված դրամաշնորհային պայմանագրերով նախատեսված գումարների մնացորդի մարում

Նախատեսվում է տրամադրել 2024 թվականներին իրականացված «Գաղափարից մինչև բիզնես» ծրագրի շրջանակներում կնքվելիք դրամաշնորհային պայմանագրերով նախատեսված գումարների մնացորդների մարումները, որը կազմում է 37,500 մլն ՀՀ դրամ:

Ծրագրի սկզբունքները

Ծրագրի բաղադրիչների իրականացման ընթացքում հաշվի են առնվելու տարածքային համաչափության, ոլորտային զարգացման, ներառականության, թափանցիկության ու հաշվետվողականության սկզբունքները:

- *Տարածքային համաչափություն*

Տարածքային համաչափ զարգացում ապահովելու համար ծրագրի բաղադրիչների ուղղակի և անուղղակի շահառուներ կլինեն ոչ միայն Երևանի, այլ նաև ՀՀ մարզերում հիմնադրված և գործող կազմակերպությունները և քաղաքացիները:

- *Ոլորտային զարգացում*

Ծրագրի բաղադրիչներն ուղղված կլինեն տնտեսության մի շարք ոլորտներում տեխնոլոգիական առաջընթացի ապահովմանը և բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ այդ ոլորտներում արտադրողականության բարձրացմանը:

- *Ներառականություն և թափանցիկություն*

Ծրագրի բաղադրիչների շրջանակում նախագծերի, ընտրության չափանիշների մշակման և հայտերի գնահատման բոլոր փուլերում կապահովվի մասնագիտական շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, ինչպես նաև հասարակության համար կապահովվի գործընթացի առավելագույն թափանցիկությունը:

- *Հաշվետվողականություն*

Ծրագրի շրջանակներում կիրականացվի շարունակական մոնիտորինգ՝ հաշվետվողականություն ապահովելու, ինչպես նաև ներդրումների արդյունավետության գնահատում կատարելու նպատակով:

- *Ծրագրի ազդեցության գնահատում*

Կարևորելով հարկատուների առջև հաշվետվողականության սկզբունքը՝ կատարվելու է ծրագրի բաղադրիչների արդյունքների գնահատում: Գնահատման ընթացքում հաշվի կառնվեն շահառու ընկերությունների, թիմերի և անձանց կողմից գրանցած հաջողությունները՝ արտադրանքի կամ մատուցված ծառայությունների զարգացման և շուկայում հեղինակության ձևավորման առումով:

Հավելված 2
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի
2025 թվականի փետրվարի 13_ի
թիվ 305-Ա հրամանի

Ծրագրի 2025 թվականի ֆինանսական միջոցների բաշխվածություն

	Ծրագրի բաղադրիչներ	Ընդհանուր բյուջե	Յուրաքանչյուր արժեք	Արդյունքային ցուցանիշ
		Հազար դրամ	*Հազար դրամ*	
1.	**«Գաղափարից մինչև բիզնես» ծրագիր**	**200,000**		**Մինչև 40 կազմակերպություն**
	«Գաղափարի փուլ»	*200,000*	*5,000*	*Մինչև 40 կազմակերպություն*
2.	**Ինկուբացիոն հնարավորությունների ստեղծում**	**10,000**		
	«Գաղափարի փուլ» բաղադրիչի հաղթող ընկերությունների համար նախատեսված ինկուբացիոն դասընթաց	*10,000*	*10,000*	*Շահառուների թիվ՝ մինչև 80 ընկերություն*
3.	**Տաղանդի ներգրավման ծրագիր**	**165,000**		
	«Ներուժ 6.0» ծրագրի նվիրաբերություն	*90,000*		*Մինչև 6 կազմակերպություն*
	«Ներուժ 6.0» ծրագրի աքսելերացիա	30,000		*Մինչև 1 հաղթող կազմակերպություն*
	«Ներուժ 6.0» ծրագրի լոգիստիկ բաղադրիչ	30,000		*Մինչև 100 մասնակից*
	«Ներուժ 6.0» ծրագրի շրջանակում ավիատոմների ձեռքբերում	15,000		*Մինչև 80 մասնակից*
4.	**Միջազգային աքսելերացիոն ծրագրի անցկացում (ներառյալ հարկեր)**	***336,000***		
	Միջազգային աքսելերատորի հայաստանյան շուկա ներգրավում	*336,000*		*1 միջոցառում*
5.	**Կնքված դրամաշնորհային պայմանագրերի գումարների մնացորդի մարում**	**37,500**		
	ԸՆԴԱՄԵՆԸ	**748,500**		